ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՏԱՆՁՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
ТАНДЗУТСКИЙ МУНИЦИПОЛИТЕТ

թիվ 131

04 դեկտեմբերի 2012թ

Արմավիրի մարզպետ
պարոն Ա.Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Տանձուտի գյուղապետարանը Ձեզ է ներկայացնում համայնքի ղեկավարի կողմից 2012 թվականի նոյեմբեր ամսին ընդունված որոշումները և արձակած կարգադրությունները :

Առդիր 8 թերթ:

Համայնքի ղեկավար Մ.Պետրոսյան

05 12 2012 10832-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1նոյեմբերի 2012թ. թիվ 6

ՄԱՐԳԱՐԻՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ և 164-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն» որոշմամբ և հիմք ընդունելով Մարգարիտ Հովհաննիսյանի դիմումը

կարգադրում եմ՝

1.Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Մարգարիտ Հովհաննիսյանին 2012թվականի նոյեմբերի 1-ից տրամադրել 2012թվականի ամենամյա արձակուրդ 24աշխատանքային /2նվազագույն, 4 լրացուցիչ/ օր տևողությամբ:

2.Աշխատանքի մեջ համարել 2012թվականի դեկտեմբերի 5-ից:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

համայնքի ղեկավար Մ. Պետրոսյան

2012թվական
նոյեմբերի 1
գ.Տանձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

12նոյեմբերի 2012թ. թիվ 7

ՄՈՒՇԵՂ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ և 164-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Մուշեղ Միքայելյանի դիմումը

կարգադրում եմ

1. Համայնքի ղեկավարի տեղակալ Մուշեղ Միքայելյանին 2012թվականի նոյեմբերի 12-ից տրամադրել 2012թվականի ամենամյա արձակուրդ՝ 24 աշխատանքային օր /20նվազագույն, 4լրացուցիչ/ օր տևողությամբ:

2.Աշխատանքի մեջ համարել 2012 թվականի դեկտեմբերի 14-ից:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար Մ. Պետրոսյան

2012թվական
նոյեմբերի 12
գ. Տանձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

26նոյեմբերի2012թվական. թիվ 8

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով, համայնքային սեփականություն համարվող գույքի ամենամյա գույքագրում իրականացնելու նպատակով

կարգադրում եմ՝

1.Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնաժողովին / Ա. Գրիգորյան / սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 10 օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար Մ. Պետրոսյան

2012թվական
նոյեմբերի 26
գ. Տանձուտ

«Գրիգորյան Հոլդինգ» ՓԲԸ-ի
գյուղական հանձնաժողովի նիստերի
2012թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 8
կարգադրության

Համայնքային սեփականություն համարվող գույքի ամենամյա գրանցագրում իրականացնելու հանձնաժողովի կազմը

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Գրիգորյան - գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

անդամներ՝

Փ. Ավետիսյան -գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Ս. Սարգսյան - գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Ա. Հայրապետյան -մանկապարտեզի վարիչ

Հ. Մինասյան -մշակույթի տան տնօրեն

Ն. Ստեփանյան -գրադարանի վարիչ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ.

1նոյեմբերի2012թ. թիվ 63

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով և հաշվի առնելով ջեռուցման բացակայությունը

որոշում եմ՝

1.2012թվականի նոյեմբերի 1-ից դադարեցնել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատանքները:

2.2012թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2013թվականի մայիսի 1-ը մանկապարտեզի վարիչ Արմանուշ Հայրապետյանին վճարել հարկադիր պարապուրդ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Մ. Պետրոսյան
2012թվական
նոյեմբերի 1
գ.Տանձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ.

20նոյեմբերի 2012թ. թիվ 64

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով

որոշում եմ՝

1.2012թվականի դեկտեմբերի 20-ին անցկացնել գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների ատեստավորում՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Մ. Պետրոսյան

2012թվական
նոյեմբերի 20
գ. Տանձուտ

Հավելված
«Արմավիրի մարզի Տանձուտ
գյուղական համայնքի ղեկավարի
2012թվականի նոյեմբերի 20-ի թիվ 64
որոշման

Գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների
ատեստավորման ցուցակ

1. Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար - ծածկագիր 1.2-1
2. Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ –ծածկագիր 3.1-1
3. Գյուղապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ –ծածկագիր 3.3-1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ.

26 նոյեմբերի 2012թ. թիվ 65

ՀԱՍՑԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 12-ի N 2387- Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով . հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006թվականի օգոստոսի 18-ի թիվ 2 որոշումը, Իշխան Նազարյանի 2012թվականի նոյեմբերիկ 26-ի դիմումը

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի բնակիչ Մարգարիտ Նազրյանին պատկանող տնամերձ հողամասին բնակելի տնով /ծածկագիր 04-094-038-018/ տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնք 3 փողոց 9 բնակելի տուն:

2. Սույն որոշումը ներկայացնել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Մ.Պետրոսյան
2012թվական
նոյեմբեր 26
գ. Տանձուտ